ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Հ Ր Ա Մ Ա Ն

09 դեկտեմբերի 2013 թվականի N 194- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև առաջարկված ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագրի Փոխըմբռնման հուշագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև առաջարկված ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագրի Փոխըմբռնման հուշագրով նախատեսված միջոցառումների կիրարկումն ապահովող Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի մասով պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից Հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Գ. Խաչատրյանին, կոմիտեի

աշխատակազմի ղեկավար Մ. Մկրտումյանին, կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ Է. Պապյանին, կոմիտեի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Կ. Սարգսյանին, կոմիտեի աշխատակազմի արտաքին կապերի բաժնի պետ Տ. Բաղդասարյանին, <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ գլխավոր տնօրեն Պ. Լորենին, <<Լոռի-ջրմուղկոյուղի>>, <<Շիրակ-ջրմուղկոյուղի>>, <<Նոր Ակունք>> ՓԲԸ-ների միջազգային գլխավոր տնօրեն Ա. Հովսեփյանին՝ ապահովել ժամանակացույցով հաստատված միջոցառումների սահմանված ժամկետներում իրականացումը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**